ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/124

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2020թ. թիվ 26/26-1/7389/-2021 գրությամբ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2417-2021 գրության հիման վրա 11.05.2021թ. թիվ 26/26-1/7389-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արուսյակ Արզումանյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.04.2021թ-ին հայտարարվել է ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1 ծածկագրով գնման ընթացակարգ, որ գնման առարկա էր հանդիսանում բժշկական թանզիֆը: Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը մասնակցել է գնման ընթացակարգին առաջարկելով Ռուսաստանի Դաշնության, Նաֆտեկ ՍՊԸ-ի արտադրության բժշկական թանզիֆը, որը իր տեխնիկական պարամետրերով համապատասխանում է հրավերի պահանջներին: Որպես մասնակից, հրավերով սահմանված հավելվածները լրացնելից մենք չենք արտատպել տեխնիկական բնութագրերը հրավերից, այլ հավելված 1.1-ը լրացրել ենք մեր բառերով, հաշվի առնելով այն, որ ԳՈՍՏ-9412-93 ստանդարտով սահմանված են բոլոր անհրաժեշտ պահանջները:

Այնուհետև շտկման անհրաժեշտության մասին ծանուցում ստանալով, լրացրել ենք հիմնական ցուցանիշները, ավելացնելով նաև ապրանքի ստանդարտին ուղղված պահանջը (ԳՈՍՏ-9412-93): Հենց միայն այդ ստանդարտի համապատասխանության մասին նշումը ապահովում է պահանջված բոլոր ցուցանիշների համապատասխանությունը: Ուստի գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից հայտի մերժման համար հիմք հանդիսացած արձանագրված անհամապատասխանությունները զուտ ձևական բնույթ են կրում: Հարկ ենք համարում նշել նաև, որ ստանդարտներում շեղումների ցուցանիշները միշտ սահմանվում են ինչպես դեպի վերև, այնպես էլ դեպի ներքև (+) տեսքով, այլ ոչ թէ միայն վերև (+), հետևաբար հրավերով սահմանված 28ք.մ. մակերեսային խտությունը և թույլետրելի շեղումը 5% ցուցանիշները դիտարկելով միասին առաջարկել ենք 28ք.մ + 5% խտության թանզիֆը: Գտնում ենք, որ այստեղ պատվիրատուն նախատեսել է հակասական պահանջ, ինչը հանգեցրել է տարաբնույթ մեկնաբանության: Շտկված փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված չլինելու մասով տեղեկացնում ենք, որ դա պարզապես հապճեպության արդյունք է եւ տեխնիկական վրիպակ: Ի վերջո տեղեկությունները ներկայացվել են մասնակցության հայտով նշված էլ. փոստից Պատվիրատուի հրավերով նշված էլ փոստին, այդ տեղեկությունները հիմք են ընդունվել գնահատող հանձնաժողովի կողմից, դիտարկվել և արձանագրվել որպես ներկայացված շտկում: Ուշագրավ է նաև այն

փաստը, որ ընթացակարգին հայտ ներկայացրած այլ մասնակիցները (Նատալի ֆարմ ՍՊԸ և Լեյկո ՍՊԸ) նույնպես առաջարկել են Ռուսաստանի Դաշնության, Նաֆտեկ ՍՊԸ-ի արտադրության բժշկական թանզիֆը և նրանց առաջարկները գնահատվել են բավարար, սակայն բոլորը գերազանցել են նախահաշվարկային գին, բացի Ա/Ձ Արուսյակ Արզումանյանիվ: Հետևաբար դա ևս ապացուցում է այն փաստը, որ/Ձ Արուսյակ Արզումանյանը ընթացակարգին մասնակցել է հրավերի պահանջներին համապատասխանող ապրանքի առաջարկով, սակայն հայտը մերժվել է որոշ ձևական պահանջներից ելնելով:

Ամփոփելով վերը նշվածները, գտնում ենք, որ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը ենթակա է մերժման, հաշվի առնելով մասնակցի բարեխիղճ վարքագիծը: Կանխավ շնորհակալություն...»:

Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/124 ընթացակարգի շրջանակներում 19.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2417-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական թանզիվի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը (այսուհետ՝ Մասնակից): Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը 28.04.2021թ. կայացած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին հասցեին ստացվել է ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը, որի ուսումնասիրության ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ ներկայացված փաստաթղթերում նույնպես առկա էր անհամապատասխանություններ՝ այսինքն պահանջված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ա/Ձ Արուսյակ Արզումանյան հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/124 ընթացակարգի շրջանակներում 19.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական թանզիֆի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 28.04.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 1.1-ում, տեխնիկական

բնութագիրը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 28.04.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ 03.05.2021թ. կայացած նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ, ինչպես նաև Հավելված 1-ը և Հավելված 1.1-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և որոշում է կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7389-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2417-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում

դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային

թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական թանզիֆի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 28.04.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 1.1-ում, տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 28.04.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ 03.05.2021թ. կայացած նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ, ինչպես նաև ***Հավելված 1-ը և Հավելված 1.1-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ*** և որոշում է կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է***

<u>նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ</u>*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ Մասնակիցը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ներկայացված փաստաթղթերը, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, մինչդեռ արձանագրում եմ, որ տվյալ դեպքում, համաձայն Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ ենթակետի, Մասնակցի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեին էլեկտրոնային ստորագրությամբ. այս պահանջը, սակայն, Ա/Ձ Արուսյակ Արզումանյանի կողմից չի պահպանվել, հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի անդրադառնում ոչ պատշաճ ձևով շտկված թիվ 1.1 Հավելվածով ներկայացված փաստաթղթի բովանակությանը, քանի որ անկախ տեխնիկական բնութագրով ներկայացրածից՝ Մասնակցի հայտը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, արդեն իսկ ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ որպես շտկում ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7389-2020 գրությամբ Ա/Ձ Արուսյակ Արզումանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արուսյակ Արզումանյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**